«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսումնառության ակտիվ մեթոդները աշակերտների ներգրավվածության բարձրացման միջոց
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Արսեն Մամաջանյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՀՀ Լոռու մարզի Կողեսի հիմնական դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Ծատուրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ առաջին: Ուսումնառության ակտիվ մեթոդներ_____5

Գլուխ երկրորդ: Դասապրոցեսում աշակերտների

ներգրավվածության հիմնախնդիրը:_____9

Եզրակացություն_____13

Հավելված_____14

Օգտագործված գրականության ցանկ_____20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմիր ինձ և ես այն կմոռանամ,ցույց տուր և ես կհիշեմ, ինձ հետ կատարիր և ես կսովորեմ:

Ն.Ա. Կռալյա

Արդի զարգացումներն իրենց անմիջական ներդրումներն ունեցան կրթակարգի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Տեղեկատվական համացանցի գյուտը շրջադարձային նշանակություն ունեցավ կրթական քաղաքականության վերանայման հարցում: Մշակվեցին ու ներդրվեցին ուսուցման նոր մոտեցումներ, որոնցում էապես վերանայվեց ուսուցման խնդիրներն ու ուսուցչի դերը: Ուսուցման գլխավոր նպատակը դարձավ սովորեցնել սովորել : Կարևորվեց տեղեկատվության որոնման, ընտրության, մշակման, յուրացման և օգտագործման նպատակով անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը:

Եթե ավանդական ուսուցման ժամանակ ուսուցիչը խաղում էր ուսումնական տեղեկույթն իր միջով անցկացնող «զտիչի» դեր, ապա այսօր օգնականի, աջակցողի, ուղղորդողի, շտկողի դեր: ՈՒսուցչակենտրոն ուսուցումից անցում է կատարվում աշակերտակենտրոն ուսուցման: ՈՒսուցիչը ոչ թե պատրաստի գիտելիքներ է տալիս աշակետին, այլ խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ա. Դիստերվերգն ասել է, որ վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է, լավը՝ սովորեցնում գտնել այն:[1]

Այսպիսով, կրթության կազմակերպումը վերակառուցվում է ոչ միայն բովանդակային, այլ ուսուցման միջոցների և մեթոդների առումով: Կրթության դերն աճում է, վերածվելով մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցություն, հանդուրժողականություն, համագործակցություն և արժեքային այլ որակներ: ՈՒստի ոչ բոլոր աշակերտներն

[1] Դիստերվեգ, «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան, 1963

են, որ կարող են դառնալ գիտնականներ, բայց դառնալ ինքնուրույն մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները, վարքը, խնդիրները, իրացնել իրեն շրջակա աշխարհում, պարտավոր է: Այս դեպքում ուսուցումը ենթադրում է ակտիվ մեթոդների կիրառում, մեթոդներ, որոնք նախատեսում են ոչ թե ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում, վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ակտիվ մեթոդների կիրառումը աշակերտներին հաղորդում է ոչ միայն առաջնային գիտելիքներ, այլև նպաստում մտածողության զարգացմանը, հետաքրքրություններին, հմտություններին, խնդիրներ լուծելու կարողությունների ձևավորմանն ու ձեռքբերմանը: ՈՒսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ակտիվ մեթոդների հետ լայնորեն կիրառվում է նաև խաղը: Այն ոչ միայն ակտիվացնելու, ներգրավելու միջոց է, այլև հնարավորություն է տալիս գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր՝ աշակերտների մոտ ստեղծելով առողջ աշխատանքային տրամադրություն ու ակտիվ մասնակցության միջավայր: Ստեղծված առողջ հոգեբանական մթնոլորտում աշակերտն իրեն զգում է ավելի հարմարավետ ու վստահ: Խաղն ու ակտիվ մեթոդներն օգնում են աշակերտներին ներգրավվել դասին և այդ ընթացքում ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ, զարգացնում մտածողությունն և երևակայությունը: Սովորողները պասիվ ընկալողից վերաճում են հայտնագործողի, հետազոտողի, հետաքրքրասերի: Ներգրավվածությունը որոշ հեղինակների մոտ արտահայտվում է հիմնականում երեք բաղադրիչներով՝ զգայական, վարքագծային, ճանաչողական: Նույն պատկերն եմ համարյա ստացել ես իմ գործընկերների հարցումներից և փորձից:

Աշակերտների ներգրավվածությունը պատմության դասին ապահովելու համար իրականցրել եմ խմբային աշխատանք՝ ակտիվ մեթոդներից կիրառելով «Խճանկար», «Դերային քարտերի բնութագրիչներ» իսկ խաղերից՝ «Պատմական լոտոն», որը ես եմ ներմուծել:

Գլուխ առաջին

Ուսումնառության ակտիվ մեթոդներ

Մեթոդը հունարեն «metodos» բառն է, որը նշանակում է ինչ – որ տեղ տանողճանապարհ, ուղի: Սահմանումները շատ են կապված այս եզրույթի հետ, սակայն մանկավարժական գրականության մեջ ավելի հաճախակի է օգտագործվում հետևյալսահմանումը. «Ուսուցման մեթոդըուսուցչի և աշակերտի հետևողական փոխկապակցված գործողություններիհամակարգ է, որն ապահովում է կրթությանբովանդակացումը»:[2] Ուսուցման մեթոդներն այսօր կարելի բաժանել 3 տեսակի՝

- Պասիվ, երբ հիմնական գործող դեմքը ուսուցիչն է, աշակերտը հանդես է գալիս պասիվ լսողի դերում: Ավանդական դասարանը հենվում է այ ենթադրության վրա, որ ուսուցումը միայն ինտելեկտուալ գործընթաց է: Միայն ուղեղ է պահանջվում, իսկ մարմնի մնացած մասերը դասարանում պետք չեն: Սրա արդյունքը ուսուցման պասիվմիջավայրն է, այսպես է արտահայտվել Սինգեն: [3]
- Ակտիվ, աշակերտ – ուսուցիչ փոխգործակցությունն է, երբ ուսումնառության ժամանակ սովորողները հանդես են գալիս ոչ միայն պասիվ լսողի դերում, այլև ուսուցիչ - աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա է գտնվում: Վիգոտսկու, Պիաժիեի և մյուսների կարծիքով միմյանց հետ միմյանցից սովորելն էլ ավելի մեծ հնարավորություն է ընձեռում ակադեմիական գիտելիքները ընդլայնելու և խորացնելու համար՝ որքան ավելի շատ են խոսում, այնքան ավելի լավ են սովորում:
- Ինտերակտիվ- շատ հեղինակներ նույնացնում են ակտիվ մեթոդների հետ, բայց այն ավելի շատ կարելի է դիտել ակտիվ մեթոդների ժամանակակից արտահայտման ձև: Շատ ժամանակ անվանում են փոխներգործուն մեթոդ, որը և ապահովում է սովորողների ներգրավվածություն: Եթե պասիվ մեթոդների ժամանակ օգտագործվում են բացատրական ու զննական մեթոդները, և պատրաստի տեղեկույթը փոխանցվում է սովորողներին վերջիններիս կողմից պարզ վերարտադրմամբ և գիտելիքի ձեռքբերմամբ, ապա ակտիվ մեթոդների/խաճանկար,դերային քարտերի բնութագրիչներ և պատմական լոտո խաղի

/ժամանակ գոյություն ունեն մի շարք առանձնահատկություններ։ Աշակերտը՝

[2] Активные методы обучения как способ повышения эффективности образовательного процесса.

[3] Маршев В.И., Лукаш Е.Н. Методы активного обучения управлению. Изд.: МГУ, 1991

նյութը սովորում է ինչ–որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի, ապավինում է ոչ այնքան հիշողությանը, որքան ինքնուրույն ստեղծագործական, քննադատական մտածողությանը, հնարավորություն է ստանում աշխատելու ոչ միայն անհատական, այլև խմբային աշխատանքներում, ձեռք է բերում համագործակցային, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցման կարողություններ ,հնարավորությունէ ստանում համակարգել, ամփոփել և կիրառել սովորածը:

Հաշվի առնելով, որ մեթոդը աշակերտի և ուսուցչի համատեղ գործունեությունն է՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը, շատ կարևոր է մեթոդների ճիշտ ընտրությունն, ելնելով ուսուցման նպատակներից: Մեթոդի ընտրությունը և կիրառությունը պայմանավորված է նաև այլ գործոններով: Իր հերթին աշակերտը պիտի հստակ իմանա ի՞նչ է անում և ինչու՞, ի՞նչ է իրենից ակնկալվում, վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու և օգնելու է: Պատահում է, որ չնախատեսված հանգամանքներն ուսուցչին թելադրում են փոխել նախապես ընտրված մեթոդը, իրավիճակը շտկելու նպատակով: ՈՒստի բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող միակ ճանապարհը, կախված իրավիճակից այն կարող է փոփոխվել: Մեթոդների, մեթոդական հնարների կիրառումը չի կարող նաև ինքնանպատակ լինել: Ուսուցչի նպատակը ոչ միայն գործընկերների առջև մանկավարժական վարպետությամբ աչքի ընկնելն է, այլև մեթոդների ճիշտ ընտրությամբ հասնել ուսուցման նպատակներին: Մի խոսքով, պետք է ոչ թե տեխնիկա ցուցադրել, այլ հասնել դասի նախապես ծրագրված նպատակին, իսկ եթե մեթոդները չեն ծառայում նպատակին, ուրեմն պետք է կատարելագործել կամ փոխել: Այսպիսով, ուսուցչի մասնագիտական, առարկայական գիտելիքների կարողությունների մասն են կազմում մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը, որոնք ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևոր ուղիներից են:

Ակտիվ մեթոդներին անցնելը չի նշանակում հրաժարվել ավանդականից, այլ պարզապես նշանակում է դասապրոցեսի արդյունավետության, հետաքրքրության և ներգրավվածության բարձրացում:

Մեթոդական և մանկավարժական գրականության մեջ սովորողների ուսումնառության մեջ ներգրավածությունն ապահվելու համար կոնկրետ չափանիշներ դժվար է առանձնացնել: Ուսումնասիրված հեղինակներից ավելի շատ խոսում են ուղղակի սովորողների ուսման նկատմամբ հետաքրքրության, ակտիվ մեթոդների, խաղերի մասին: Ներգրավվածության առումով հետազոտողները տարակարծիք են: Հաշվի առնելով հեղինակների տեսակետները, առանձնացրել ենք հիմնականում երեք բաղադրիչ՝ վարքագծային-մասնակցային/ձեռք բարձրացնելը/, ճանաչողական-առարկայական և զգայական/ վերաբերմունքի փոփոխություն /: Տարակարծությունը նշված եզրույթի մասին երևաց նաև իմ գործընկերների հարցումներից, որոնք խմբավորելով ես համարյա նույն բաղադրիչներն ստացա: Ներգրավվածությունը դա՝

- Աշակերտի ֆիզիկական ներկայությունն է դասին
- Աշակերտների նախաձեռնություններն են
- Տեխնիկական պահով ուսուցչին ցուցաբերած օգնությունն է
- Անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածությունն է
- Դասին կենտրոնանալը
- Հարցերին պատասխանելը
- Նոր գաղափարներ ու մտքեր արտահայտելը
- Մասնակցությունն է քննարկումներին
- Դասանյութին պատրաստ լինելը
- Առաջադիմության և որակի ապահովումը

Գլուխ երկրորդ:

Դասապրոցեսում աշակերտների ներգրավվածությանհիմնախնդիրը:

Մանկավարժության մեջ գոյություն ունեցող շատ մեթոդներով՝ խճանկար, դերային քարտերի բնութագրիչ կարելի է բարձրացնել աշակերտների ներգրավածությունն ումասնակցությունը: Ինչպես եզրակացնում են Բլեքը և Վիլիամը, խթանիչ հանձնարարությունների և ծավալուն պատասխանների տրամադրումը, աշակերտների առավել ներգրավվածության և ավելի մեծ հաջողությունների պատճառ է դառնում: Սեփական փորձով համոզվել ենք, որ աշակերտների առավել հետաքրքրվածությունն ու ներգրավվածությունը դրսևորվում է խմբային աշխատանքի ժամանակ, որի ընթացքում հնարավոր է վերահսկել աշակերտների ներգրավվածության աստիճանը՝ դիտարկման հիմքընտրելով հաղորդակցությունը, օգնության և աջակցության տրամադրումը,փոփոխությունների ընկալման աստիճան պարզելը:

Աշակերտները ներգրավված են այնքանով, որքանով որ գաղափարներով և մտքերով կիսվում են խմբի մյուսանդամների հետ, պատրաստ են աշխատանքի արդյունքը ներկայացնելու, գիտակցում են,որ գնահատվելու է խմբի յուրաքանչյուր անդամի առաջընթացն ու ներդրումը, լսում են միմյանց, քաջալերում և արժևորում են յուրաքանչյուրի մասնկցությունը, նկարագրում են աշխատանքի ընթացքում ունեցած զգացմունքները:

Այսպիսով խմբային աշխատանքների ժամանակ ձևավորվում են այնպիսի հմտություններ, որոնք չեն կարող չապահովել ներգրավվածությունը,ինչպես նաև խնդիրների լուծման այս չափանիշներով սովորողները չեն կարող ներգրավված չլինել ուսուցման մեջ:Վերը նշված մեթոդներով խմբային աշխանանքի ժամանակ ձևավորվում են նաև սոցիալական հմտություններ / ունկնդրում, մտքերի փոխանակում, միմյանց աջակցում, համատեղ պլանավորում, քաջալերում, խոսքի հստակ ձևավորում, ընդհանուր նպատակների ձևավորում, քննարկման մեջ մյուսների ներգրավում/:Վերոհիշյալ հմտությունները ներառում են վարքագծային այնպիսի որակներ, ինչպիսիք են միջանձնային փոխհարաբերություններում վստահության ստեղծումը, հաղորդակցումը, միմյանց աջակցելը, որոշումներ կայացնելը, խնդիրներ լուծելու հմտությունները: Կարծում եմ ներգրավվածություն նշանակում է նաև խմբերում սոցիալական հմտությունների զարգացում: Խմբային միջավայրում խոսելու, բանակցելու, վիճարկելու, հարցեր տալու միջոցով

սովորողները զարգացնում են իրենց ճանաչողական կառույցները ու հմտությունները, ինչպես ասել է Պիաժիեն:[4]

Աշակերտների ներգրավվածության բարձրացման համար ես հատկապես կարևորում են խաղի դերը, որը ցանկացած գործունեության ժամանակ տալիս է սպասվածից մեծ արդյունք: Խաղն օգնում է նույնիսկ «թույլ» երեխաներին, նրանց տալով ոչ միայն գիտելիք,այլև զարգացնում է տրամաբանությունը: Պիաժիեն գտնում է, որ խաղը ինքնաարտահայտման միջոց է, այն օգնում է և' գիտելիքի ձեռքբերմանը, և' ամրապնդմանը: Ուսումնառությունը հետաքրքիր, գրավիչ դարձնելու համար ես դիմել եմ տարբեր մեթոդների ու խաղերի, որոնք սովորողների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ պահպանել են մինչև ուսումնական պրոցեսի ավարտ:Ինչպես նշում է հեղինակներից մեկը .

_,,Շիլան կարագով չես փչացնի,, (Պետրիչուկ Ն.Ի.):[5]

Խաղերի տարբեր տեսակների է անդրադարձել նաև Բորզովան, որոնք փորձարկել է և' դասերի, և' միջոցառումների, և' խմբակների ժամանակ: Նա պնդում է,որ վատ խաղ չկա, ուղղակի ուսուցիչը այն չի կարողանում լավ կազմակերպել: Խաղի ընտրությունը կախված է նրանից, թե ինչ նպատակ ունի ուսուցիչը և ինչ վերջնարդյունք է փորձում ստանալ: Իմ ուսումնասիրած հեղինակների մոտ նշվում է, որ խաղը կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում, բայց Բորզովան նշում է, որ ուսուցիչը խաղը խաղալու համար բավականին մեծ փորձ պետք է ունենա(Բորզովա էջ 16):[6] Իմ փորձով ես համոզվեցի դրա ճշմարտացիության մեջ, երբ դասարաններից մեկում (12_րդ դասարան թեմա ՝ <<Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին>>)խաղացինք պատմական լոտոն, աշակերտները ոգևորված խաղով դժվար կենտրոնացան հաջորդ փուլին : Հաջորդ անգամ ես այն արդեն կիրառեցի ավելի շատ ամփոփման փուլում,որն ավելի արդյունավետ էր: Եվս մեկ կարևոր դիտարկում, որ չպետք է խաղալ, եթե սովորողը ցանկություն չունի, քանի որ այն կարող է հակառակ արդյունքն ունենալ: Խաղի միջոցով հնարավոր է ներգրավել աշակերտներին ուսումնառության մեջ լիարժեք, քանի որ նրանք իրականում խաղում են՝ չգիտակցելով, որ դրանով ստուգվում և ամրապնդվում է նրանց գիտելիքները/ինչպես դա ես անում եմ իմ դասաժամերի ընթացքում օրինակ ՝ 11_րդ դասարան թեմա <<Հայկական հարցի միջազգայնացումը>> ամփոփիչ դասին կիրառեցի պատմական լոտոն որով ստուգվեց և

[4] Пиаже Ж. Речь и мышление ребенка. — 1994
[5] Н.И. Петричук, «Еще раз об игре», 2007г, Педагогика 7, с. 60
[6] Л.П. Борзова, «Игри на уроке истории, Москва 2003г., с.16

ամրապնդվեց աշակերտների գիտելիքները:Պատմական լոտո խաղը կիրառել և կիրառում եմդասի ամփոփման փուլում կամ թեմայի ամփոփման ժամանակ օր.՝ <<Նապոլեոնի դարաշրջանը >> 8_րդ դասարան , <<Կիլիկյան Հայաստանը>> 11_րդ դասարան/ : Փորձարկումն իրականացվել է Շիրակի մարզի դպրոցներից մեկում, որպես թիրախ ընտրվել է այն դասարանը, ուր ուսումնական տարվա սկզբից նկատվել էր, որաշակերտները առարկայով հետաքրքրված չեն, դասապրոցեսին ներգրավված չեն, մոտիվացված չեն: Կարող եմ անկեղծ լինել և ասել, որ իմ մանկավարժական գործունեության ընթացքում երևի միակ դեպքն է, երբ իրոք խնդիրը բացահայտ էր, նբավական ժամանակ երեխաների մոտ համարյա փոփոխություն չնկատեցի առարկայի նկատմամբ՝ հետաքրքրության և ներգրավվածության առումով: Կարծում եմ, որ դասարանին հասկանալու համար ինձ խանգարեց նաև կանխակալ լավ կարծիքըհինչեցրած այդ դասարանի ու հատկապես մի քանի աշակերտների համար: Դասարանը դասերին բովանդակային առումով անպատրաստ էր գալիս, աշակետները հետաքրքրություն չէին ցուցաբերում ուսումնառության ընթացքում, չէին պատասխանում փակ ու բաց հացերին,իսկ եթե պատասխանում էին,ապա առանց մտածելու, հարցեր չէին առաջադրում, առավել ևս չէին հնչեցնում մարտահրավերային հարցեր, տնային աշխատանքներրը թերի էին կատարում, հատկապես, երբ պետք էր զեկույց կամ գրույթգրեին, պատճառահետևանքային կապերը դժվարանում էին բացահայտել, զարգացած չէր համեմատելու և համադրելու կարողությունը,խմբային աշխատանքներին մասնակցումէին քչերը :

Խնդիրը լուծելու համար փորձեցի պարզել այս ամենի պատճառը: Զրույցներ ունեցա դասղեկի, դասավանդող ուսուցիչների և դասարանի աշակերտների հետ: Ստորև ներկայացնում եմ աշակերտների հետ ունեցած զրույցի արդյունքները, որոնք հավաքագրել եմ: Արդյունքում 18 աշակերտ պատասխանել էր. ուղղակի առարկան չի հետաքրքրում, տարեթվերը, անուններն ու դասի ծավալը շատ են, պատմելով ձանձրալի է, նաև ավելացրել են, որ նախնական գիտելիքների պաշարը բավարար չէ: Խնդրել էի գրել առաջարկություն: Առաջարկել էին՝

- կիրառել ակտիվ մեթոդներ
- կատարել քննարկումներ
- խմբային աշխատանք կատարել

- դասն անցկացնել հետաքրքիր ու աշխույժ։

Մի քանի անգամ ընթերցել եմ աշակերտների կարծիքները, խմբավորել ու հետևություն արել, որ աշակերտների ներգրավվածությունն ապահովելու համար ակտիվ մեթոդներից կարելի է կիրառել «Դերային քարտերի բնութագրիչներ», «Խճանկար», իսկ խաղերից՝ «Պատմական լոտոն»։ Մեթոդներն ընտրեցի երկար մտածելուց ու այլ դասարաններում փորձելուց հետո։ Մեթոդներ,որոնց շնորհիվ ոչ մի աշակերտ չկարողացավ իր մասնակցությունը չբերել ուսումնառությանը։ Ոչ մեկը չկարողացավ <<գլուխ պահել>> ,քանի որ ամեն մեկը ստացավ համապատասխան դեր ու հստակ առաջադրանք իմ կիրառած մեթոդների ու խաղի շնորհիվ՝ լիներ դա <<թույլ կամ ուժեղ >> գիտելիքներ ու հմտություններ ունեցող կամ չունեցող աշակերտ։ Մեթոդներն ընտրեցի Փեթիի <<Առանց պամելու դասավանդման 25 եղանակ>> հոդվածից,իսկ պատմական լոտոն ինքնաբուխ ծնվեց դասարաններից մեկում, երբ աշակերներից մեկը խաղ առաջարկեց։ Խաղը՝ լոտոն դաձավ, բայց պատմական։ 1-ին անգամ աշակերտների հետ պատրաստեցինք,սովորական տետրի թղթից ,դասի ժամանակ ու հասցրեցինք խաղալ։ Այս մեթոդներն ու խաղը ,որ ես կիրառեցի իմ դասավանդման ընթացքում, իրոք ապահովեցին աշակերտների ներգրավվածության բարձրացումը ։Վերը հիշատակված մեթոդներով,խաղով խմբային աշխատանքով պայմանավորված ներգրավվածությունն ապահովելու և փոփոխություններնարձանագրելու համար ես հավաքագրել եմ տվյալները փորձարկումից առաջ և հետո ,թե քանի աշակերտ է բովանդակային առումով պատասխան տալիս, ձեռք բարձրացնում, առանց մտածելու կամ մտածված պատասխան տալիս,պատասխանում փակ և բաց հարցերին ,մասնակցում խմբային աշխատանքներին և քննարկումներին ։ Որպես վկայություն են ծառայել գործընկերների դասալսումները ,նկարահանված դասերը,սեփականնոթագրումները և թեստային աշխատանքները։ Քանի որ ներգրավվածությունն ապահովելու համար իմ դասերն ընթանում էին խմբային աշխատանքով , ուստի շատ կարևոր էր մշակել կանոններ դասարանի կողմից/պատասխանատվությունը մեծացնելու նպատակով/ ։

Կանոններ՝

- Դասին ներկայանալ ժամանակին
- Լսել միմյանց
- Լինել պատրաստ (կարող է պատասխանել խմբից պատահական ընտրվածը)

- Քաջալերել մյուսներին
- Հարգել դիմացինի կարծիքը
- Քննարկել գրադարանային ձայնով
- Հետևել ժամանակին
- Հետևել ուսուցչի նշանին՝ ձեռքին կամ ձայնին

Կանոններից հետո կարևոր է նաև գնահատման չափանիշների մշակում դարձյալ աշակերտների կողմից: Առարկայական իմաստով դրանք ունեցան հետևյալ տեսքը՝

- Տարեթվերի, իրադարձությունների իմացություն
- Գրագետ, սահուն, լակոնիկ բանավոր խոսք
- Քարտեզի իմացություն
- Հասկացությունների, եզրույթների իմացություն
- Համադրելու, համեմատելու ունակություն
- Աղյուսակներ, գծապատկերներ, սահիկաշարեր պատրաստելու հմտություն նկար
- Պատճառահետևանքային կապերի բացահայտման հմտություն
- Գնահատելու և արժևորելու կարողություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մեր փորձարկման ընթացքում եկել ենք այն եզրահանգմանը, որ կիրառելով ակտիվ մեթոդները՝ խճանկար, դերային քարտերի բնութագրիչներ, խաղերից պատմական լոտոն, աշխատելով խմբերով ու անհատական ,ապահովեցի աշակերտների ներգրավվածությունը, որը չէր նկատվում փորձարկումից առաջ/աշակերտներից մի քանիսն էին հարցերին պատասխանում, դասի մեջ չէին մտնում, ունեին այլ զբաղմունք. /: Փորձարկման ընթացքում բոլորն էլ <<դասի թեմայի մեջ էին>>, բոլորն էլ ունեին համապատասխան առաջադրանք: Սովորողները նշված մեթոդները կիրառելու ժամանակ գիտակցում և զգում էին որ, իրենք «սուզվելու են կամ լողալու են միասին»: Այն ավելի էր հզորանում, երբ աշակերտներին տրվում էր համատեղ «մեդալներ և անելիքներ» առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ ընդհանուր փաթեթի մի մասը և սահմանված դերերը՝ ուսուցիչ, հարցատու, ստուգող, աջակցող և այլն: Արդյունքում բացի հիմնական վկայություններից, ես կարողացա նաև հավաքագրել լրացուցիչ վկայություններ՝ աշակերտները հանդես են գալիս առաջարկություններով և սեփական նախաձեռնություններով, դժգոհում են երբ զանգը հնչում է, երբ իրենք հարցին չեն պատասխանում, երբ խումբը չի հասցնում ներկայացնել թեման, լրացուցիչ աղբյուր են ներկայացնում թեմային համապատսխան, դասը ցանկանում են սկսել քաղաքական լուրերով:Համոզվեցի որ ,ներգրավված կարելի է համարել նաև աջակցող, տեխնիկական մասի պատասխանատու, քարտեր բաժանող, գրատախտակը մաքրող աշակերտներին:

Հավելված

ԱԿՏԻՎ մեթոդներներ

«Խճանկար» - թեման բաժանում են այնքան ենթաթեմաների, որքան պետք է լինի խբերի քանակը, և՛ փորձագիտականը և՛ հիմնականը: Խմբերը ձևավորվում են ուսուցչի կողմից, պետք է լինեն խառը՝ առաջադիմությամբ, փորձառությամբ, սեռով պայմանավորված, հնարավորին չափ ընկերներին նույն խմբում չընդգրկել: Համապատասխան խմբերի քանակով հաշվարկից հետո, օրինակ՝ 1 – 5 – ը հաշվելուց հետո աշակերտները վերադասավորվում են փորձագիտական խմբերում, որտեղ ընդգրկվում են մայր խմբերից մեկական աշակերտ, և յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում են 1 ենթաթեմա: Հետագայում մայր խմբերում ունենալով 1 փորձագետ / իմ օրինակով «ցածր» առաջադիմությամբ 2 փորձագետ, նրանց տալով առաջադրանքը կիսելու հնարավորություն/: Փորձագիտական խմբում աշակերտները միմյանց բացատրում են համապատասխան ենթաթեման, համագործակցում համատեղ առաջադրանքի շրջանակում, ուսուցչի հարցադրումները հաշվի առնելով: Սահմանված ժամանակահատվածում թեման ավարտելուց հետո վերադառնում են հիմնական խմբեր, որտեղ յուրաքանչյուր ենթաթեման ներկայացնում է 1 աշակերտ: Այսինքն՝ հիմնական խումբը նմանվում է «խճանկարի», քանի որ փորձագիտական խմբերից 1-ական աշակերտ միանալով ստեղծում է լիակատար խումբ: Յուրաքանչյուր ենթաթեան ներկայացնում է 1 աշակերտ, և թեման դառնում է ամբողջական: «Այս մեթոդը շատ արդիական է բարձր նվաճումների, տրամաբանական բարձր հմտությունների, ստեղծագործական բարձր մտածողության, և ոչ հարակից թեմաների ոլորտ գիտելիքի փոխանցման պարագայում: Այն գերազանց գործիք է խմբերի միավորման, հասարակական հմտությունների զարգացման, համագործակցության և հավասար հնարավորությունների խթանման համար»:[7] Խճանկար մեթոդը իմ կիրառած մեթոդներից ամենաշատն է ընդունված աշակերտների կողմից :Կիրառելի է հիմականում ծավալով փոքր դասերի ժամանակ իմաստի ընկալման փուլում օր. ՝ 12_րդ դասարան Համաշխարհային

[7] Փեթի Ջ., 2002թ. վեստվար, «Անց պտոմելու դասավանդման 25 եղանակ»,

պատմություն <<Ազգերի ինքնորոշման հիմնախնդիրն ու չճանաչված պետությունները>>,<<Հռոմեական կայսրությունը I-IV դդ. >> 10_րդ դասարան:

«Դերային քարտերի բնութագրիչներ» - Խմբային աշխատանքի ժամանակ այս մեթոդով աշխատելիս խմբի յուրաքանչյուր անդամ ստանձնում է մի դեր: Դերերը բաշխում է ուսուցիչը, կամ հմտանալուց հետո աշակերտները ևս կարող են խմբի ներսում կատարել դերերի բաշխում:

ՈՒսուցիչ – ուսումնասիրում է հանձնարարված նյութը և այն բացատրում խմբի անդամներին: Բացատրության եղանակները ընտրում է ինքը, փակուղու առջև կանգնելու դեպքում դիմում է դասավանդող ուսուցչի օգնությանը:

Ստուգող – ստուգում է, թե արդյոք խմբի բոլոր անդամները հասկանում են խմբի ուսուցչի բացատրությունները, անում են ճիշտ եզրահանգումներ, կազմում է հարցադրումներ և առաջադրում խմբին:

Գրառող – ամփոփում է խմբի հիմնական եզրահանգումները, գրի առնում հնչած մտքերը, որոնք պետք է ներկայացնի մյուս խմբերին:

Հարցատու – կապված նյութի հետ խմբի անդամներին մարտահրավեր պարունակող հարց է տալիս, նպատակը՝ խմբի ուշադրությունը առանցքային կետերի վրա հրավիրելն է:

Բառապաշարի պատասխանատու – ուսումնասիրում և բացատրում է տեքստում եզրույթների նշանակությունը, գրում «եզրույթների բառարանում», ստուգում և համոզվում, որ բոլորը կարող են բացատրել եզրույթները:

Առաջնորդ - ժողովրդական սկզբունքով կառավարում և առաջնորդում է խմբին, հավաստիանալով, որ տրված ժամանակահատվածում խումբն ավարտին է հասցնում առաջադրանքները:

Դերերը լավագույնս աշխատում են այն ժամանակ, երբ ուսուցիչը աշխատանքից հետո ստուգելու է սովորողների գիտելիքը՝ հետադարձ կապի, թեմատիկ կամ թեստային աշխատանքի միջոցով: Դերային խաղերը ըստ ուսուցչի հայացողության կարող են փոփոխվել: Մեթոդը կիրառում եմ հիմանականում դասի ընկալաման փուլում

օր.՝<<Արաբական խալիֆայությունը և Հայաստանը >> 7_ րդ դասարան , <<Արտաշես I բարեփոխումները>> 10_րդ դասարան, <<Խաչակիրների դարաշրջանը>> 11_րդ դաարան:

Պատմական լոտոն 2 A4 թղթերից մեկի վրա պատասխաններն են գրվում, որը բաժանվում է աշակերտներին, կտրատված թղթերի վրա հարցերն են, որը խաղը վարողը պահում է իր մոտ: Հարցերն ու պատասխանները համարակալված են նույն համարով և հավասար քանակով են : Հարցերը բացառապես թեմայից են: Խաղի կանոններն են՝

1. Բարձրաձայն ընթերցվում է հարցը

2. Հարցի պատասխանը հնչում է համապատասխան համարով:

3. Համարը հնչելուց հետո հետևում են համարների համապատասխանեցում:

4. Համարը հնչելուց հետո նոր աշակերտի կողմից բարձրաձայն ընթերցվում է հարցի պատասխանը:

5. Ճիշտ պատասխանի դեպքում հատկացվում է միավոր, սխալ պատասխանի դեպքում հատկացվում է տուգանային միավոր: Տուգանային միավոր ստանում է նաև այն աշակերտը ում մոտ ճիշտ պատասխանն էր, բայց չէր գուշակել:;

6.Խաղի արդյունքների ամփոփում:

7.Գնահատում/ձևավորող ,միավորային կամ որևէ այլ խրախուսանք/

Փորձարկված 7 դասերից հետո համեմատեցինք հավաքագրված տվյալները և արդյունքում ստացանք աղյուսակ 2-ը:

7-րդ դասերից հետո հանձնարարեցի գրել թեստային գրավոր աշխատանք և համեմատեցի մինչ հետազոտությունն ու դրանից հետո ստացված արդյունքները: Պարզեցի ,որ իմ կիրառած մեթոդների՝ «խճանկար», «դերային քարտերի բնութագրիչներ» և խաղերից «պատմակա լոտոն» բարձրացրել են ոչ միայն ներգրավվածությունն ,այլև առաջ են բերել իմացական մակարդակի փոփոխությունը/Տես գրաֆիկ 1/ :

Եկա այն եզրահանգման, որ ակտիվ մեթոդների և խաղի կիրառումը ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Առավելությունները հիշատակել էին

երեխաները իրենց անդրադարձներում: Կառանձնացնեմ առավելություններից ութերություններից մի քանիսը

Առավելություն՝

- Սովորում են սովորեցնելիս
- Ձեռք են բերում միմյանց հետ աշխատելու հմտություն
- Սովորում են իրենց էությանը համապատասխան ձևով
- Բացահայտում են հմտություններն ու կարողությունները
- Համատեղ մշակում և վերլուծում են տեղեկույթը
-
- Մեծանում է աշակերտների

ինքնուրույնությունը:Թերություններ՝

- «Բարձր» առաջադիմությամբ աշակերտները «պարտավորված են» սովորեցնելու մյուսներին, որի պատճառով նրանց առաջընթացը դանդաղում է
- Աշակերտները կարող են տարբեր միավորումներ ստանալ նույն առաջադրանքը կատարելուց և հիասթափվել:
- Ոչ ճիշտ գնահատումը կարող է առաջ բերել «ազատ թռչնի» խնդիրը, նա չի կարողբացել թևերն ու ճախրել, քանի որ աշխատում է խմբում
- Աշակերտները կարող են հուսահատվել, երբ որ իրենք ջանասիրաբար են աշխատել,բայց խմբերի կողմից համապատասխանաբար չեն գնահատվել:

Հավաքագրված տվյալներ	Դաս 1	Դաս 2	Դաս 3	Դաս 4	Դաս 5	Դաս 6	Դաս 7
Բովանդակային առումով պատասխան են տալիս	4	6	8	12	12	15	16
Ձեռք են բարձրացնում	3	3	5	9	14	16	18
Պատասխանում են առանց մտածելու	8	8	6	5	5	4	4
Պատասխանում են մտածված	3	4	6	8	13	15	22
Պատասխանում են փակ և բաց հարցերին	3	3	5	8	12	13	15
Մասնակցում են խմբային աշխատանքին	10	15	18	20	22	22	22
Մասնակցում են քննարկումներին	6	8	12	16	17	19	20

Աշակերտների ներգրավվածություն Թեստային աշխատանքների տվյալները



Գրաֆիկ 1

Գրականության ցանկ

1. Դիստերվեգ, «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան, 1963

2. Փեթի Ջ., 2002թ. փետրվար, «Առանց պատմելու դասավանդման 25 եղանակ»,

3.Активные методы обучения как способ повышения эффективности образовательного процесса.

3. Петричук Н.И., «Еще раз об игре», 2007г, Педагогика 7, с.

604Краля .Н.А. «Метод учебныхпроектов»

5.Борзова. Л.П., «Игри на уроке истории», Москва 2003г., с.16

6. Маршев В.И., Лукаш Е.Н. Методы активного обучения управлению. Изд.: МГУ, 1991

7. Petty, G. “Teaching today”. CH 5 Motivation